

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1853



21 OCT 2010

20. 05

# ԺՈՐԺ ԳՐՈՍ

741  
2-15 my

ՏԵՐԱ

ԿԱՐՈ ՀԱԼԱԲՅԱՆԻ



ԺՈՐԺ ԳՐՈՍ

«ՑԵՐՊՈՐԴՈՒԹՅՈՒՆ»



1924

Հ. Ա. Խ. Հ. ՊԵՏՏՐԱՏ № 203—ՄՈՍԿՎԱ

29.05.2013


1853

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ ՆԿԱՐՁԱԿԱՆ ՄԵՐԻԱՑԻ ՀՐԱՑԱՐԱԿՈՒԹՅԱՆ  
ԱՌԻԹՈՎ,

Հայ գրականությունը պատկերող արվեստի վերաբերյալ  
չափազանց աղքատ և յեղել մինչեւ այժմ՝ Վոչ միայն Յեվրո-  
պայի յեվ Ծուսաստանի, այլեվ հայ պատկերող արվեստագետ-  
ների գործերը տակավին հրատարակված չեն, մինչդեռ նման  
գրականության պահանջը զգալի յէ դարձել: Այդ պահանջից յել-  
նելով Պետհրատի Մոսկվայի Բաժանմունքը ճեռարկել է առա-  
օին հերթին նկարչական սերիայի հրատարակության:

Այս սերիան կազմված է լմնելու արդի յեվ կլասիկ նկա-  
րիչների լավագույն գործերից, ամփոփված առանձին զրքույկնե-  
րի մեջ: Հրատարակությունները կրելու յեն հանրամատշելի  
բնույթ:

Հ.Ս.Խ.Հ. ՊԵՏՀՐԱՏԻ ՄՈՍԿՎԱՑԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ



1073

ՃՈՐՃ ԳՐՈՒՄ

Իմպերիալիստական պատերազմ, հեղափոխություն, քաղաքական ցնցումներ—ահա այն միջավայրը, վորի ծնունդն ե ժորժ Գրոսսը:

Մինչդեռ Յեվրոպայում, Ամերիկայում և Ռուսաստանում  
նկարիչների ամբողջ բանակներ շարունակում են մնալ բուր-  
ժուական կուլտուրայի կույր գործիքներ, գեղարվեստի և սուլը-  
տաճարի» սպասավորներ, Ժորժ Գրոսար, անցնելով հեղափոխա-  
կան պրոլետարիատի կողմը՝ իր արվեստը տրամադրեց նրան  
ու դարձավ պրոլետարիատի դասակարգային պայքարը կազ-  
մակերպողներից մեկը:

Գրոսսի համար արվեստով զբաղվելը ինքնանպատակ գործ չէ, նա հանկացել ե այն ճշմարտությունը, վոր քաղաքական

ցնցումների ու պայքարի այս մեծ որերին հանցանք ե մնալ ապադասակարգային, պասսիվ արվեստի քուրմ. նա գիտակցել ե, վոր այժմ կարելի յե լինել կամ մեռնող բուրժուազիայի կամ պայքարող պրոլետարիատի կողմը և արվեստն ել տրամադրել մեկի կամ մյուսի դասակարգային շահերին:

«Ներկայումս գեղարվեստը բացարձակապես յերկրորդական բան ե»—ասում ե Գրոսսը իր նկարների առթիվ գրված հոդվածում.—«Նա, ով ցանկություն ունի նայել իր մեծ մասամբ անհատականորեն դրված արվեստանոցից այն կողմը—կլիոստովանի այդ: Այնուամենայնիվ գեղարվեստը մի գործ ե, վոր լիակատար գիտակցություն ե պահանջում նրանով զբաղվողից: Ամենայն միենույնը չե, թե ով ես գու այս արտադրության մեջ, ինչ վերաբերմունք ունես գեղի այն պրոբլեմը, վորի անունն ե մասսա—վորը հասկացողի համար դադարել ե արդեն պրոբլեմ լինելուց: Շահագործողների կո՞ղմն ես, թե մասսայի, վորն արդեն ձգտում ե քերթել այդ շահագործողների կաշին»:

Այս տողերը մեզ պարզում են, թե վորքան առողջ, համարձակ ու գիտակցորեն ե մոտենում Գրոսսը իր արվեստին և ինչ խնդիրներ ե դնում նրա առջև:

Յեվ հասկանալի յե, թե ինչու բուրժուազիան ամեն կերպ աշխատում ե մեկուսացնել Գրոսսին:

Բերենք մի փաստ, վորը պարզ ցույց ե տալիս, թե իրոք ինչ միջոցների յեն դիմում Գրոսսի թշնամիները՝ անվտանգ դարձնելու նրան իրենց համար: Ալբերտ Քինը իր «Ժորժ Գրոսսը վորպես հեղափոխական նկարիչ» հոդվածում գրում ե. «Դեռ անցյալ տարի, յերբ նոր եր սկսվել Ռուբի ոկուպացիան Գերմանիայում, ազգայնական մի կազմակերպություն դիմում ե Գրոսսին իրենց հաշվով մեկնել Ռուբ «Թրանսիական ոկուպացիայի արհավիրքները» նկարելու համար: Այսպիսի, իրոք, սատանայական ծրագրով ազգայնական վոհմակը ցանկանում եր անվաս դարձնել նկարչին՝ նրա ուշադրությունն ուղղելով

գեղի ազգայնական նպաստակները: Մոմենտը հարմար եր ընտրված. անհաստատ մարդու աչքին ֆրանսիական իմպերիալիստների քաջագործությունները թերևս աննկատելի դարձնելին յերկրի ներքին իմպերիալիստների քաջագործությունները: Բայց Գրոսսը ամբողջ այդ զբագրությունը հրապարակ հանեց «Rote Fahne» (կոմունիստական որգան) թերթի եջերում, հայտարարելով, վոր գեռես նկարելու համար ինքը նյութեր շատ ունի, թեկուզ Բավարիայում (վորտեղ այն ժամանակ հականեղափոխությունն ու սպիտակ տերրորն եր իշխում,—Կ.Հ.) և վոր ինքը չի ցանկանում ծառայել ազգայնական վոհմակի նըպատակներին»:

Իր նկարների յերեք ժողովածուների մեջ, 1. Տիրող դասակարգի դեմքը, 2. Մենք գեռ հաշիվ կտեսնենք, 3. Սա յե մարդը,—Գրոսսը տալիս է այժմյան քայլքայվող Յեվրոպայի դեմքը, մերկացնում բուրժուական քայլքական գործիչներին, տալիս պրոլետարիատի դժվարին կյանքն ու պայքարը:

Գրոսսը իր նկարներում անողոք ե. նա իրերի վրայից պոկում ե բոլոր դիմակները, շղարշները, մերկացնում բուրժուական բարքերն ու ցուցագրում դիտողի առաջ իրերը իրենց իսկական տեսքով: Կապիտալիստներ խողային դնչերով, բանկիրներ հաստ պարանոցներով, ծախված ինտելիգենտներ, պոռնիկներ, հաշմանդամներ, զեխություն, ընկած բարքեր, և այդ բոլորի կողքին ծայրահեղ չքավորություն. այս ամենը կազմում են Գրոսսի նկարների նյութը:

Նրա նկարների մոտով անկարելի յե անտարբերությամբ անցնել. նրանք հուզում են դիտողին, ստիպում են նրան մտածել ու հասկանալ շրջապատը, քայլքական յերեւոյթները:

Գրոսսի գործերը մեծ մասամբ իլյուստրացիաներ են, կամ քաղաքական մի վորեւ դեպքի առթիվ արված նկարներ: Զնայած դրան, նրանք ժամանակի ընթացքում չեն կորցնում իրենց արժեքն ու թարմությունը, վորովհետև Գրոսսը կարողանում ե իր շրջապատը տեսնել, գտնել ամեն ինչի մեջ նրա

եյական կողմը ու տաղանդավոր կերպով դրսեվորել այն:

Գրոսսը վոչ միայն նյութերի ընտրության, այլ և արվեստի մեջ հեղափոխական եւ նա վրապես քաղաքական նկարիչ նախ և առաջ աշխատում եւ հասկանալի լինել բոլորին: Այդ պատճառով ել նրա նկարները կարիք չեն զգում բացատրության, նրանք առաջին հայացքից հասկանալի յեն: «Եես նորից փորձում եմ տալ աշխարհի ծայրահեղ ռեալիստական պատկերացումը—ասում ե Գրոսսը—յես ձգտում եմ հասկանալի լինել ամենքին, առանց անխուսափելի «խորության», ուր անհնարին ե մտնել առանց ջրասուզային հագուստի, վորը լի յե մոգական սուտով ու մետաֆիզիկայով...Դրվում ե կոնարող գծի և ֆորմայի վրա: Խնդիրն այն չե, վոր եքսպրեսիոնիստական պատառներ կազմել կտավի վրա: Խնձեներական գծագրության առարկայությունն ու պարզությունն ավելի ուսուցանող են, քան մետաֆիզիկայի ու սրբազն եքստագի անկոնտրոլ պոռուտախոսությունը»:

Անփորձ դիտողին Գրոսսի նկարները սկզբում կարող են թվալ մանկական, բայց իրոք նրանց արվեստը կատարյալ և ու խորը մշակված: Գրոսսը ոգտվում ե անցած գեղարվեստի տեխնիկայի բոլոր միջոցներից. նրա նկարներում մենք տեսնում ենք Վինցենտ Վան-Գոգի դինամիկան, շարժումը, Պիկասոյի նկարների եքսպրեսիան ու կոմպոզիցիան, Կանդինսկու գրաֆիկ գծի հարատությունն և ուժը:

Գրոսսի նկարներում ամեն մի գիծ բղխում ե անհրաժեշտությունից, նրա բոլոր նկարները կոնստրուկտիվ են, պարզ ու համոզեցուցիչ: Նրա նկարներում անկարելի յե գտնել ավելորդ մի գիծ կամ առարկա, ամեն ինչ կատարում ե իր դերը:

Նա ժխտում ե գույնը իր նկարներում, վորովհետեւ նրանով զբաղվելը դանդաղեցնում ե աշխատանքի պրոցեսը: Ագիտատոր Գրոսսը, վորը ապրում ե մեր տեսնոտ ժամանակաշրջանում, յերբ կյանքը ընթանում ե արագագույն տեմպով ու

պետք ե պատասխանել քաղաքական առորյա հրատապ ինդիբներին, ժամանակ չունի բնության և յերեսույթների գունային կողմը ուսումնախրելու: Գրաֆիկ գիծը ամենից նպատակահարմարն եւ և արտահայտության միջոցներից ամենամասսայականը:

Գրոսսը դիտող ե. նա մանրամանորեն ուսումնախրում ե իրեն շրջապատող մարդկանց դեմքերը, հագուստը, շարժումներն ու սովորությունները, իսկ նկարներում տալիս ե գրանց կվինտեսենցիան ժամանակակից արտահայտիչ գծագրությամբ:


Յեկ այդ ե պատճառը, վոր վոչ մի դեմք, վոչ մի արտահայտություն Գրոսսի նկարներում չի կրկնվում, նրա նկարած հարյուրավոր բուրժուանները արտաքինով իրար նման չեն:

Գրոսսի սուր դիտողությունը նրա առավելություններից գերազանցն ե:

Գրոսսի նկարներում կոմպոզիցիան նույնպես շատ բնորոշ է. նա այնպես ե դասավորում իր գծերը, վոր դիտողի աչքից և վոչ մի իր նկարի մեջ անուշադրության չի մատնվում, իսկ վոր գլխավորն ե, տպավորությունը ուժեղացնելու համար ըստեղծում ե զարմանալի կոնտրաստներ ու դարձնում նկարը՝ բովանդակալի և ազդու:


Ժորժ Գրոսսը ժամանակակից ուժեղ նկարիչներից միակն ե, վոր կարողացավ հրաժարվել բուրժուական ֆորմալ շկոլայից ու իր արվեստի բարձր տեխնիկան կիրառել հեղափոխական նկարչության մեջ: Գրոսսը իր ստեղծագործությամբ բացեց այժմյան նկարիչների համար ֆորմալ շկոլայից ազատագրման լայն ուղիներ: Յեկ Ս.Խ.Հ. Միության նկարիչները շատ բան ունեն սովորելու Գրոսսից: Ահա թե ինչու մեզ համար Գրոսսը դառնում ե կրկնակի հետաքրքիր նկարիչ:

Ն Կ Ա Ր Ն Ե Ր



ԳՐԱՄԱՆԱՀԱՅ

ԱԺԴԻՇՎԵՐԻ





ՏԵՐՈՂ ԱՎԱՋԱԿՆԵՐ








ՈՒՄ ԻՆՉ ՏՊԵՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ




ՓՈՂՈՑՈՒՄ




ԼՈՒՍԱԲԱՑԻՆ




ԹԵՎԱՌՈՒԹՅՈՒՆ




ԲԱՆԱԳՐԻ ԸՆՏԱՆԻՔԸ



ԱՐԵՎԱԿԱՆ ԿԱՐԻՆԵՏՈՒՄ




ՄԻ ՍՈՑԻԱԼԻԿԱՆ ԿՅԱՆՔԻՑ




ԽՈՒԶԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ମୁନ୍ଦରିଲୀଶ୍ୱରୀ ପ୍ରାଚୀନୀ ପ୍ରାଚୀନୀ






ԹԱՆՎՈՐԱԿԱՆ ՍԱՆՑԱՐԻԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՑԵՐԿՆԵՐՈՒՄ



ԲՈՒՐՃՈՒԱԿԱՆ ԴԻԿԱԾՈՒԹՅԱՆ

Միջնադարյան, սեպական զանգված ՄԵԱ





ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ՀԱՄԱՐ

## ՆԿԱՐՉԱԿԱՆ ՍԵՐԻԱ

ԼՈՒՅՍ Ե ՑԵՍԵԼ

### 1. ԺՈՐԺ ԳՐՈՍՍ

ՏԵՔՍՏ  
ԿԱՐՈ ՀԱԼԱԲՅԱՆԻ

ՏՊԱԳՐՎՈՒՄ ԵՆ

### 2. ՖՐԱՆՍԻՍԿՈ ԳՈՅԻԱ

ՏԵՔՍՏ  
Մ. ՄԱԶՄԱՆՅԱՆԻ

### 3. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ

ՏԵՔՍՏ  
Ա. ԿՈՐԻՆՅԱՆԻ

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ

### 4. ՀՈՆՈՐԵ ԴՈՄԻՅԵ

ՏԵՔՍՏ  
Մ. ՄԱԶՄԱՆՅԱՆԻ

### 5. ՖԵԼԻՍԵՆ ՌՈՊՈ

ՏԵՔՍՏ  
ԿԱՐՈ ՀԱԼԱԲՅԱՆԻ

### 6. ՌՈՒՍ ՆԿԱՐԻՉՆԵՐ

—  
X

### 7. ՎԱՆՈ ԽՈԶԱԲԵԿՅԱՆ

—

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

# ԱՊԳԱՅ ՀԱՐԱԳԵՐՄԱՆ

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ  
ԳԱՅՈՒԹՅՈՒՆ

## ԱՊՐՈՎ ՔԱՐՔԻ

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ  
ԳԱՅՈՒԹՅՈՒՆ




ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ  
ԳԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ  
ԳԱՅՈՒԹՅՈՒՆ



ԽՍՀ. Օդ. Գումարած ՀՀ Տպարան, Արման. թի., 2.

Համար 30271.

Տպարան

Տպարան



ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ԳՐԱԴԱՐԱՆ



NL0296953

165